9/56

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«08» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0074-22

Ձեռնարկողը՝ ***<< ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ >> ՍՊԸ***
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղհովիտ, 5-րդ փ, տ. 174

Գործունեությունը՝ ***Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0074-22

< 08 > 06 2022թ.

Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	« ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ » ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, Ծրագիր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, ք. Գեղհովիտ, 5-րդ փ, տ. 174

Ներածական մաս. ՀՀ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակումը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի վարչական տարածքում՝ Մադինա գյուղից մոտ 10.5կմ հյուսիս, հյուսիս-արևմուտք: Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են "Յանա Վարդանյան" ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցների հաշվին, Գեղհովիտ համայնքի կոմից ընկերությանը հատկացված շուրջ 3.7հա մակերեսով տարածքում:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների նպատակն է ուսումնասիրել Քարաձորի անդեզիտաբազալտների երևակման ապարները որպես երեսապատման նյութ 9479-98 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջների, իսկ թափոնները որպես շինարարական ավազի, խճի հումք ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014): Հետախուզական աշխատանքները կկատարվեն սյունակային հորատման 7 ուղղաձիգ հորատանցքերով ու մեկ մաքրվացքով, օգտագործելով նաև փորձնական հանույթի բացահանքի երկրաբանական տվյալները: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-96մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 8-42 մետր խորության 7 հորատանցքեր 166.0 մետր ընդհանուր ծավալով,

հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին՝ ժամանակակից դելյուվիալ առաջացումներ IV կարգ, հողմահարված, ճաքճքված անդեզիտաբազալտներ VII կարգ, խիստ ճեղքավորված անդեզիտաբազալտներ VIII կարգ: Հետախուզական փորվածքների տեղադիրքը և հեռավորություններն ընտրվել են այնպես, որպեսզի հնարավոր լինի օգտակար հանածոյի պաշարներն ուսումնասիրել, եզրագծել և գնահատել արդյունաբերական կարգերով: Երևակումը կհետախուզվի 4 հետախուզագծերով: Հետախուզագծերի միջև հեռավորությունը կազմում է 56-182մ, 3 հետախուզագծերի վրա հորատվելու է 2-ական հորատանցք, իսկ մեկի վրա՝ 1 հորատանցք ու մեկ մաքրվացք: Հետախուզական գծերի և փորվածքների միջև այսպիսի հեռավորությունները թույլ է տալիս երևակման հաշվարկված պաշարները գնահատել արդյունաբերական կարգով:

Հորատանցքերի հորատումը կատարվելու է Հորատող հաստոց UGB-1 VS (ZIL-131) մակնիշի ինքնագնաց հաստոցով, 132-96մմ տրամագծով: Հանուկի ելքն օգտակար հաստվածքից պետք է լինի 80-85% սահմաններում: Նախատեսված 7 հորատանցքերի ընդհանուր ծավալը կկազմի 166.0գծ.մ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով կնմուշարկվեն 27 հանուկային նմուշներ և 4 մենաքարեր (2-ական փորձնական հանույթի բացահանքից և մաքրվացքից), որոնց միջին չափսերը կկազմեն 30×30×30սմ: Հորատահանուկային նմուշների երկարությունը՝ 5մ միջակայքով:

Բազալտների քիմիական կազմը ուսումնասիրությունը կկատարվի 3 նմուշներով: Պետրոգրաֆիական նկարագրությունը կիրականացվի հորատանցքերից վերցված 2 նմուշներից պատրաստված շլիֆների հիման վրա:

Լեռնային զանգվածից նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 20x6.0x2.5=300.0խմ ծավալով, որից 22.5խմ լանջային փուխր նստվածքներով՝ հողաբուսական նյութի խառնուրդով, 127.5խմ հողմնահարված և ճեղքավորված բազալտներից և 150խմ չհողմնահարված, թարմ ապարներից:Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից կատարվելու է 150.0խմ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ թարմ անդեզիտաբազալտներից: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով՝

1) X – 4427504.0	Y – 8522007.0
2) X – 4427531.0	Y – 8522326.0
3) X – 4427435.0	Y – 8522481.0
4) X – 4427402.0	Y – 8522384.0
5) X – 4427466.0	Y – 8522193.0
6) X – 4427374.0	Y – 8522075.0
1) X – 4427504.0	Y – 8522007.0

Երևակման տեղամասը ներկայացված է անօգտագործելի, գյուղատնտեսական աշխատանքների համար ոչ պիտանի տարածք, զուրկ անտառային ծածկույթից: Երևակման տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել: Հորատման հարթակների շինարարություն չի նախատեսվում, իսկ փորձնական բացահանքի անցման ժամանակ խոտաբուսական ծածկույթի վրա կդրսևորվի աննշան բացասական ազդեցություն, որը հետո կվերականգնվի ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 90000 դրամ գումար:

Քարաձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Մեքենաների տեղաշարժի, հորատման աշխատանքների և փորձնական արդյունահանման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի և փոշու աննշան արտանետում:

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համապատասխանաբար կազմում են 0,0005գ/խմ; 0,000085գ/խմ; 0,00015գ/խմ; 0,0005գ/խմ:

Նախնական հաշվարկներին համաձայն, երևակման տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Հայցվող տարածքից մոտ 815մ արևմուտք՝ հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ ձգվում է 3-6մ խորությամբ տաշտակաձև ձորակ, որի հատակով հոսում է անանուն գետակ, իսկ շուրջ 1450մ արևելք՝ հոսում է Մարտունի գետի ձախակողմյան վտակների մեկը:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, ինչպես նաև ճանապարհների բարվոք վիճակը, ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար հորատման հրապարակների և Ճանապարհների շինարարություն չի նախատեսվում: Հետևաբար, հողերի խախտում կատարվելու է միայն փորձնական բացահանքի տարածքում:

Փորձնական բացահանքի անցման ժամանակ ճիմապատ, խոտաբույսերի արմատների խիտ ցանցով պատված, լանջային փուխր նստվածքների հետ խառնված հողաբուսական շերտը հանվելու է, պահեստավորվելու է բացահանքի մոտ: Նույն տեղ են կուտակվելու նաև մակաբացման ապարները: Փորձնական հանույթից հետո կկատարվեն տարածքի բարեկարգման, հարթեցման աշխատանքներ, բացահանքի կողերի թեքության անկյունները փոքրացվելու են, նախքան փորձնական արդյունահանումը հանված և կուտակված հողային շերտը հետ է փռվելու հարթեցված մակերեսի վրա: Մինչև ռեուլտիվացիոն աշխատանքների իրականացումը առանձին պահեստավորված հողանուսական ճիմապատ շերտը պարբերաբար ջրվելու է՝ խոտաբույսերի կենսունակությունը պահպանելու համար:

Հաշվի առնելով աշխատանքների ոչ մեծ ծավալները, փորձնական բացահանքի տարածքում քարքարոտ հողերի խախտումը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա աննշան ազդեցություն: Երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակների աճելավայրեր չեն արձանագրվել: Քարածորի երևակման տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանը Արմաղան հրաբխային կոնն է, որը գտնվում է երևակումից մոտ 8կմ հյուսիս-արևմուտք:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ այդ թվում՝

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով,
- օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում: Փոշենստեցման նպատակով և անձնակազմի կենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը մատակարարվելու է պայմանագրային հիմունքներով մոտակա Գեղհովիտ բնակավայրից:
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո փորձնական բացահանքի տարածքում կկատարվեն տարածքի բարեկարգման, հարթեցման աշխատանքներ, բացահանքի կողքերի թեքության անկյունները փոքրացվելու են, նախքան փորձնական արդյունահանումը հանված և կուտակված հողային շերտը հետ է փռվելու հարթեցված մակերեսի վրա,
- նախատեսվում է առաջնորդվել ՀՀ Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով,
- բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Քարածորի երևակման տարածքում «ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթը մեկ անգամ, հողերի աղտոտվածության մոնիթորինգ

տարեկան մեկ անգամ հաճախականությամբ, երևակման հարակից տարածքում կենսաբազմազնության մոնիթորինգ: Բնապահպանական մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազ.դրամ:

Պակճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական շենքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ.սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՅԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝

Վ. Հարությունյան